Արձանագրություն N 5

«ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«_27__»«մարտի» 2019թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝Հ.Մանուկյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տ.Սաֆարյան, Վ.Մամիկոնյան, Գ.Եղիազարյան, Ա.Աղայան

Հանձնաժողովի քարտուղար՝Ա.Հարությունյան

Բացակայում էին՝

1. «ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ» ծածկագրով հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

1.1 «Ին Վի» , «Էլեկտրոպրիբոր», «Արմբիլդ» ՍՊ ընկերությունները սահմանված ժամկետում, էլեկտրոնային փոստի միջոցով, ներկայացրել են ՀՀ ՊԵԿ կողմից տրված տեղեկանք պարտավորությունների մասով, համաձայն որի ընկերությունները ունեն պարտավորություն դրոշմանիշային վճարների մասով, որն էլ ըստ ՀՀ ՊԵ կոմիտեի տեղեկատվության, համարվում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

1.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44-րդ կետի դրույթներով՝ եթե կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Հանձնաժողովը որոշեց՝ մերժել «Արմբիլդ», «Ին Վի», ՍՊ ընկերությունների հայտերը և «Էլեկտրոպրիբոր» ՍՊ ընկերության հայտը N63-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնային բանակցությունների մասին

2.1 Քանի որ, 59-րդ և 63-րդ չափաբաժինների մասով, հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների գնային առաջարկները, գերազանցում էին այդ գնումն իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետերի բ) և գ) պարբերությունների հիման վրա, հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել էր և գները նվազեցնելու նպատակով, մարտի 27-ին ժամը 11:00-ին, ք.Երևան, Կորյունի 2 հասցեով, հրավիրվել միաժամանակյա գնային բանակցություններ:

2.2 Գների նվազեցման միաժամանակյա բանակցություններին նվազեցված գնային առաջարկներ չեն ներկայացվել:

Հետևաբար, 59-րդ և 63-րդ չափաբաժինները հայտարարվեցին չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. «ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ» ծածկագրով հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

3.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, վերը նշված ընկերությունների հայտերը մերժվել են, հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ «Վոլֆ Շին» ՍՊ ընկերությանը՝ 14, 39-րդ, «Լամա-Տ» ՍՊ ընկերությանը՝ 21-րդ, Արմեն Զաքարյան Գագիկի ԱՁ-ն ընկերությանը՝ 61-րդ, ԱՁ Արմեն Հասանյանին՝ 36, 41-րդ, չափաբաժինների մասով ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից և առաջարկել ներկայացնել հրավերով պահանջվող փաստաթղթերը, իսկ «Լամա-Տ» ՍՊ ընկերության մասով տվյալների ճշտման մասին, հարցում ուղարկել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

3.2 Համապատասխան տեղեկատվությունը ստանալուց հետո հրավիրել հաջորդ նիստը,

որի մասին կտեղեկացվի լրացուցիչ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ.Մանուկյան

Անդամներ՝ _____ Տ.Սաֆարյան

_____ Վ.Մամիկոնյան

_____ Գ.Եղիազարյան

_____ Ա.Աղայան

Քարտուղար՝ _____ Ա.Հարությունյան